

Հայաստան, Միջագետք, Ռուսաստան իւրաքանչիւր ազգէ, ոչ թէ փափին կողմէն, հրաւիրականք գացած են Հռովմ հրաւիրելու պատրիարքներ և եպիսկոպոսներ՝ հասկնալու համար փափին մէկ նոր նպատակը: Նամակը ստորագրողները կը խնդրեն Դաւիթ պարքէ. որ իր իշխանութեան բոլոր շուքով այցելութիւն մը տայ Հռովմի. և նոյն ատեն այնպիսի ընդունելութիւն մը պիտի ըրայ իրեն որ եւ ոչ շիցի շեալ այնպիս յառուրն Լուսաւորչի ևայլն: Դիմառնական վերջաբանէն ետքը, նամակին տակ ստորագրած են հետևեալները

Վերակացու Սուրբաւելանի  
Չսեր Յովնաննէս Տերզնցիև  
Տեր Թադեոս ժաւարար Հայոց  
Խաչատուր, Գրիգոր եպիսկոպոս.

Սոյն գրաբար նամակին ամբողջութիւնը տեսնել (Հայապատում էջ 599-603):

Դաւիթ պարք. Մերտինցի իր ժամանակի գիտնական ու անուանի եկեղեցականներէն մին նկատուած էր, ինչպէս կը հասկըցուի հետևեալ տողերէն: 1583ին Սիդոնի եպօս.՝ Léonard Abel կոչուած, Գրիգոր ԺԿ. պապին կողմէն Արեւելք կը շրջուի կրօնական նպատակով մը. յիշեալ եպօս. 1587 ին իր տեղեկագիրը կուտայ Սիքստոս Ե. պապին: Արեւելքի միւս ազգերու մասին տեղեկութիւններ տալէ յետոյ, էջմիածնի եւ Սոսյ մեր երկու կաթողիկոսութիւններուն և վանքերու մասին կարեոր տեղեկութիւններ կը հաղորդէ և նոյն ժամանակի հայոց եկեղեցականներէն իբր անուանի գիտնականներ կը ներկայացնէ լերոյշեալ Երուսաղիմի Դաւիթ Եպս. ին հետ

Ագարիա Պատրիարքը  
Պետրոս Վրդ. Կարկառեցիև.  
Յովնաննէս եպս Ջեյրուսի.  
Տիրատուր վրդ. Տիւրիսի.

մանրամասնութիւնները տեսնել Սիդոնի եպօս.ի Relation de l'Évêque de Sidon խորագրով տեղեկագրին մէջ. (ROC. 1898. էջ 200-216. 328-339):

ԴԱՒԻԹ ՍՐԿ.— Ս. Յակոբի եկեղեցիին Ս. Կարապետի պահա-